9171

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՈՄ-ԿՈՒԼՏՊՐՈՊԲԱԺԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵՆՔ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ԿՈՒՍՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՐԸ

ՅԿՈՏ
Բ-81

ԿՈՒՍՀՐԱՏ
1933 ՅԵՐԵՎԱՆ

3Кп5
Р-81

3Кп5
Р-81
2 4 SEP 2006
24 NOV 2006
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԿՈՒՍՈՐՎԱ ՄԱՍԻՆ

ՀԿ (Բ) Կ ԾԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Լսելով շտուրմային ամսվա 20-որյակի մասին Ցերևանի արդյունաբերության աշխատանքի արդյունքները՝ Ցերևանի Կոմիտեն արձանագրում է նշանակալից բեկում կիսամյակի պլանների կատարման գործում։ Այսպես, որինակ՝ Կոնսերվի գործարանի, Կաշեգործարանի, «Արարատ»-ի, Կարի գործարանի, Ծխախոտի գործարանի, Տպարանի, Ջեթ-ոճառ գործարանի կիսամյակի պլաններն արդեն կատարված են։

Սակայն, չնայած այս բոլորին՝ Ցերկոմը ձեռք բերված նվաճումները համարում է անբավարար։ Մասնավորապես Ցերկոմն ընդգծում է դեռ ամբողջովին չվերացված կանցելյարական բյուրոկրատական մեթոդի մասին մի շարք ոբյեկտներում՝ արտադրության տնտեսական ղեկավարության կողմից՝ վոչ միայն համապատասխան ժողկոմատների, այլ և առանձին գործարանավարչությունների կողմից, տեխնիկայի տիրապետման և գործարանների տեխնիկական կարողության յուրացման անբավարար դրությունը, վորը ցայտուն կերպով արտահայտվեց հունիսի 20-ի կուսորվա նախապատրաստման և անցկացման ժամանակամիջոցում, յեռանկյունիների անբավարար պայքարն արտադրանքի վորակի համար, արտադրական դիսցիպլինայի ամրացման, ընկ. Ստալինի վեց ցուցումների լրիվ կիրառման համար, տնտեսաշվարկի միջգործարանային պլանավորման որինակելի դրվածքի համար, միջգործարանային բոլոր ռեսուրսների ոգտագործման և ձեռնարկություններում մասսայական-

10 5 MAR 2013

9777

քաղաքական աշխատանքների լայն ծավալման համար։ Ցերկոմն առանձնապես ընդգծում է՝ չնայած այն բանին, որ համեմատած անցյալ տարվա հետ շինարարությունները ապահովված են բոլոր տեսակի շինանյութերով, ֆինանսներով, բանուժով և այլն, շինարարությունում կիսամյա պլանը չի կատարված շինկազմակերպությունների մեղքով, որը հանդիսանում է շինկազմակերպությունների աջ ոպորտունիստական պրակտիկայի ցայտուն որինակ։

Այս թերությունները վերացնելու նպատակով և գործարաններում 33 թ. մնացյալ կիսամյակում որինակելի աշխատանք կազմակերպելու համար Ցերկոմը որոշում է—

1. Հուլիսի 7-ի միասնական կուսորը գործարաններում, նորակառույցներում, տրանսպորտում, կոոպցանցում նվիրել կիսամյա պլանի կատարմանն ու յերրորդ յեռամյակի խնդիրներին։ Հիմնարկային բջիջներում հերթական կուսորում քննել ՀԿ(բ)Կ Կենտկոմի և կոլտնտ. համագումարի վորոշման կենսագործումը՝ մշակման և քաղհանի կամպանիայի մասին, որը հրատարակվել է «Խորհրդային Հայաստան»-ում։

2. Առաջարկել բոլոր դիրեկտորներին և բջիջների քարտուղարներին՝ կուսորվա խնամքով պատրաստման հիման վրա ընդհանրացնել իրենց որյեկտներում աշխատանքի հաջողություններն ու թերությունները, մասնավորապես շտուրմային ամսվա աշխատանքների փորձի և հունիսի 20-ի կուսորվա տվյալների հիման վրա՝ մատնանշել բոլոր կոնկրետ և պրակտիկ միջոցառումները՝ ապահովելու համար նորմալ և անխափան աշխատանք արդյունաբերությունում, տրանսպորտում և շինարարությունում՝ յերկրորդ կիսամյակի մնացած վեց ամիսների ընթացքում։

3. Առաջարկել յեռանկյունիներին՝ կուսորվա նախապատրաստման և անցկացման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել՝

ա) ընկ. Ստալինի պատմական վեց ցուցումների կենսագործման աշխատանքներում գոյություն ունեցող թերություններին և նշել ամենավճռական միջոցներ այդ թերություններն ամբողջովին վերացնելու համար։ Ընտրել

61098-67

քաղաքականապես գրագետ կայուն 6 կոմունիստներ, նրանց յուրաքանչյուրին հանձնարարելով ստուգել և պատրաստվել կուսորում յելույթի՝ ընկ. Ստալինի վեց ցուցումներից առանձին հարցերի շուրջը։

բ) Համ. Կ(բ)Կ Կենտկոմի Դոնբասի մասին կայացրած վորոշման հիման վրա և դրանից յելնելով, հաստատել ղեկավարության ամենաամուր և գործնական ձև արտադրության ամենորյա աշխատանքներում; առանձնապես ցեխերում և բրիգադներում, անհրաժեշտ բարձրության հասցնելով տնտեսավարկը բոլոր ոլորտներում, կարգավորել և որինակելի հիմքերի վրա դնել միջգործարանային հանդիպական և հերթափոխ հանդիպական պլանավորումը, նոր աստիճանի բարձրացնելով սոցմրցումն ու հարվածայնությունը։

գ) Կուսորվա նախապատրաստման ու անցկացման ընթացքում շտուրմային ամսվա փորձի հիման վրա՝ յուրաքանչյուր կոմունիստի ու բանվորի գիտակցության մեջ պետք է ամրացնել բայլշևիկյան այն ճշմարտությունը, որ մեզ մոտ «չկան լավ ու վատ գործարաններ ու հիմնարկներ, այլ կան լավ ու վատ ղեկավարներ», և որ հենց շտուրմային ամիսը մի անգամ ևս ապացուցեց, որ արդիֆինպլանի կատարման ու թերակատարման պատճառը հիմնականում գտնվում է ղեկավարության, կենդանի մարդկանց, մեր մեջ և վոչ թե ինչ-վոր որյեկտիվ պատճառների մեջ, ինչպես բարբաջում են ոպորտունիստական տարրերը։

դ) Ցերևանի Կոմիտեն կուսբջիջների և դիրեկտորների ուշադրությունը հատկապես հրավիրում է մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու, արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարի շուրջը և լրիվ ապահովելու յերկրորդ կիսամյակի արդիֆինպլանների վորակական բարձր ցուցանիշները։

յե) Կուսորվա նախապատրաստման գործում ապահովել պրոֆմիութենական, կոմսերիտական և կանանց պատժողների ամենաակտիվ մասնակցությունը, այդ աշխատանքներում ընդգրկելով մասնավորապես արտադրական

ակտիվին, վորն ընդունակ է կազմակերպված պայքար մղել պլանների կատարման ու գերակատարման համար։

4. Կուսորվա նախապատրաստման ու անցկացման ամբողջ ընթացքում բոլոր գործարաններին, շինարարությանը և տրանսպորտի բջիջներին կցել Ցերկոմի անդամներին, վորոնց բջիջների քարտուղարների հետ միասին պատասխանատու դարձնել քաղաքի հաջող անցկացման համար։

5. Հերթական կուսորի զեկուցողներ առաջադրել դիրեկտորներին, տրանսպորտի պետերին, շինարարության կառավարիչներին և առևտրա-կոոպերատիվ կազմակերպությունների ղեկավարներին։

6. Հուլիսի 7-ի կուսորը, մինչև հիմնական զեկուցումը, լսել արտադրական տեխնիկայի խորհրդակցությունների նախագահների հաղորդումը՝ հունիսի 20-ի կուսորը ընդունած վորոշումների կիրառման ընթացքի մասին։ Հուլիսի 5-ին բոլոր բջիջներում հրավիրել բյուրոյի նիստեր, ուր լսել կուսխմբակավարների, ագիտատոր-պրոպագանդիստների, ԼԿՑԵՄ բջիջների քարտուղարների, տեղկոմների նախագահների ու պատժողների ղեկավարների ինֆորմացիան, թե նրանք ինչպես են նախապատրաստվում կուսորին։

Դիրեկտորների և բջիջների քարտուղարների անձնական պատասխանատվությամբ՝ մինչև քաղաքը բոլոր գործարաններում, շինարարական օբյեկտներում ու տրանսպորտում պլանների կատարման մշտական տախտակներ ունենալ, ուր տալ պլանների կատարման ընթացքը ցեխերում, ագրեգատներում ու բրիգադներում, սիստեմատիկաբար սև տախտակի բարձրացնել իրենց պլանը չկատարող կոմունիստներին ու բանվորներին։

7. Առաջարկել կազմհրահանգչական, կուլտպրոպբաժիններին և ագիտմասսայական բաժնի վարիչին՝ հուլիսի 4-ին հրավիրել կուսկազմակերպիչների, խմբակավարների ու բջջային կուլտպրոպների ու ագիտատորների հատուկ խորհրդակցություն և նրանց հանդամանորեն հրահանգել հերթական կուսորվա անցկացման շուրջը։

8. Ցերկոմի կուլտպրոպբաժնին առաջարկել մինչև կուսորը հրատարակել՝

ա) հատուկ բրոշյուր,

բ) որինակելի գործարանների թերթիկներ, ուր ամփոփել առաջին կիսամյակում նրանց ձեռք բերած նվաճումների փորձը։

Կազմհրահանգչական և կուլտպրոպ բաժիններին առաջարկել հուլիսի 7-ի կուսորվա կապակցությամբ կոնկուրս կազմակերպել՝

ա) ստորին կուսողակում կուսորվա նախապատրաստումը լավագույն կերպով տանելու։

բ) արտադրական-տեխնիկական խորհրդակցության լավագույն նախագահի, վորը լավ է նախապատրաստվել կուսորվա և լավ է կենսագործում հունիսի 20-ի կուսորվա վորոշումները։

9. Բջիջների քարտուղարների և դիրեկտորների հրահանգչական խորհրդակցություն հրավիրել հունիսի 3-ին։ Հրահանգչական զեկուցումը հանձնարարել ընկ. Լ. Բարսեղյանին։

10. Հանձնարարել բջիջների բյուրոներին կուսժողովը վերջանալուց հետո մնալ տեղերում և Ցերկոմից կցված ընկերոջ հետ միասին քննության առնել կուսորվա արդյունքներն ու նշել բջիջի ընդունած վորոշումների կենսագործման կոնկրետ միջոցները։

Ցերևանի Կոմիտեն համոզված է, վոր հուլիսի 7-ի կուսորի որինակելի նախապատրաստումով ու անցկացումով, վորը նվիրված է արդյունաբերության առաջին կիսամյակի աշխատանքի արդյունքներին ու յերրորդ յեռամսյակի խնդիրներին, ապահովելով արդյունաբերության նորմալ պլանային որինակելի աշխատանքը, Ցերևանի բայլշևիկները կկարողանան ժամկետից առաջ Ցերևանի արդյունաբերության պլանը կատարել Հայաստանի խորհրդայնացման 13-րդ տարեդարձին։

ՀԿ (բ) Կ Ցերկոմի քարտուղար՝
Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՊԱՏՎՈՎ ՅԵՎ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԸ ԿԱՏԱՐԵՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժողկոմխորհի և ԿԿ-ի յերեկ հրապարակված վորոշումներն ապրիլի 8-ի վորոշման հետ միասին կազմում են ծավալուն ծրագիր ածխարդյունաբերության վերակառուցման համար, վորն անց է կացվում ընկ. Ստալինի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ։ Այդ վերակառուցման իրագործումը, ինչպես ցույց են տալիս վերջին որերս մամուլի հաղորդած փաստերը, հանդիպում է բյուրոկրատական և ոպորտունիստական տարրերի համառ դիմադրությանն ինչպես տնտեսական ապարատում, այնպես էլ Դոնբասի կուսակցական կազմակերպություններում։ Չէ՞ վոր Ուկրաինայի Կոմկուսակցության Դոնմարզկոմի որգան «Սոց. Դոնբաս»-ը կուսակցական խնդիրների բարձրության վրա չգտնվեց, փորձելով լեռնագործներից թաքցնել ԿԿ-ի այն հեռագիրը, վորը պահանջում էր անհապաղ ստուգել կուսակցության դիրեկտիվները սաբոտաժի յենթարկելու փաստերը, վորոնց մասին հաղորդել էր մամուլը։

Հին, գրասենյակային-բյուրոկրատական մեթոդներն ամուր արմատներ են գցել, և նրանցից չի կարելի ազատվել առանց վճռական ու անխնա պայքար մղելու բոլոր նրանց դեմ, ովքեր խանգարում են Դոնբասի վերակառուցմանը, ովքեր նրան դեպի հետ են քաշում։ Իսկ Դոնբասը դեպի հետ են քաշում գրպանում կուստոմս ունեցող չինովնիկները, վորոնք չեն կարողանում հասկանալ կուսակցության ազդարարած՝ Դոնբասի վերակառուցման պատմական նշանակությունը։ Դոնբասը դեպի հետ են քաշում յերկրեբեսանիները, վորոնք կուսակցությունից թաքցնում են իրենց իսկական ձգտումները և կուսակցությանը «հավատարիմ» լինելու մասին կեղծ յերդում տալու դիմակի տակ փորձում են գործնականում վիժեցնել կուսակցության քաղաքականությունը։ Այդպիսի մարդկանց համար մեկ ճանապարհ կա — դուրս կուսակցությունից և դատի։

Ածխարդյունաբերությունը նոր եպոխա յե թևակոխում։ Կուսակցության ԿԿ-ի 1930 թվի վորոշումը Դոնբասի մասին և ԿԿ-ի հանձնաժողովի մեկնումն այնտեղ ընկ. Մոլոտովի գլխավորությամբ, համամիութենական հնոցավարի մեքենայացված բաղա ստեղծելու եպոխա բաց արին։ Ժողկոմխորհի և կուսակցության ԿԿ-ի 1933 թվի ապրիլի 8-ի վորոշումը և ԿԿ-ի հանձնաժողովի մեկնումը Դոնբաս ընկ. Կագանովիչի գլխավորությամբ, Դոնբասի առաջ մեքենայացված բաղան յուրացնելու եպոխա յեն բաց անում։

Դոնբասի մեքենայացումը, վորը շախտերը տնայնագործական հանքերից վերածեց ինդուստրիալ ձեռնարկությունների, իսկ հանքափորին՝ հողափորից ինդուստրիալ բանվորի,— պահանջում եր արմատապես փոխել արդյունաբերության ղեկավարման մեթոդները։

Ածխարդյունաբերության կառավարման հին սիստեմը բնորոշվում է ամենից առաջ նրանով, վոր նա ինժեներատեխնիկական և կազմակերպչական ուժերի հիմնական մասսային կուտակում եր վոչ թե հողի տակ, վորտեղ ածուխն է հանվում, այլ հողի յերես, գրասենյակներում, վորտեղ թղթեր են գրվում։ Ածխարդյունաբերության կառավարման նոր սիստեմը հակադիր նպատակ է հետապնդում։ Նա վճռական ուժերը կենտրոնացնում է ստորերկրյա աշխատանքներում, հանքամասերում, հենց հանքի սրտում։ Այդ իրագործվում է նրանով, վոր աշխատողներին վճռականորեն վերերկրյա աշխատանքներից ստորերկրյա աշխատանքները, գրասենյակներից արտադրությունն են տեղափոխում։

Կառավարման հին սիստեմն ինժեներների և տեխնիկների մեջ արհամարհանք եր դաստիարակում ստորերկրյա աշխատանքի նկատմամբ։ Վոչ միայն ինժեները, այլև տեխնիկը, դիպլոմ ստանալուց հետո իր արժանապատվությունից ցածր եր համարում փորփրել ստորերկրյա աշխատան-

քի մանրուքները և ձգտում էր ինչքան կարելի է շուտ անցնել ապարատը։ Վոչ-շատ ժամանակ առաջ ուսումնական հաստատություններն ավարտած մեր ինժեներներից և տեխնիկներից շատերը հանքի հոտն անգամ չէին առնում, դպրոցական նստարաններից ուղղակի փոխադրվելով դրասենյակների բազկաթոռների վրա։

Այս ամբողջ կարգն այժմ արմատապես վերանայվում է։ Ածխարդյունաբերության տնտեսավարները, նրա կուսակցական և արհեստակցական կազմակերպությունները պետք է այնպես անեն, որ ստորերկրյա աշխատանքը դառնա ամենահարգելի ու պատվավոր գործն ինժեների և տեխնիկի համար, որ յուրաքանչյուր լեռնային ինժեներ և տեխնիկ իր արժանապատվությանը համապատասխան համարի ամենից առաջ աշխատանքն արտադրության մեջ։ Թող յուրաքանչյուր ինժեներ և տեխնիկ, որն այժմ ստորերկրյա աշխատանքի է փոխադրվում, իմանա, որ կուսակցությունն այդ փոխադրումը համարում է առաջքաշում ամենապատվավոր պոստում։

Կառավարման հին սիստեմն այնպես էր կառուցված, որ հանքի ղեկավարությունը, Ժողկոմխորհի և ԿԿ-ի շեշտակի բնորոշումով, ապակենտրոնացված էր և բաժանված մի շարք արհեստականորեն առանձնացված ֆունկցիաների, բազմաթիվ միանգամայն անպետք բաժիններով և սեկտորներով, որի հետևանքով անհետացել էր ինչպես հանքի իրական ղեկավարման հնարավորությունը, այնպես էլ այդ ղեկավարության պատասխանատվությունը։ Այդ կազմակերպչական շիլափլավի անմիջական արդյունքը եղել էր այն, որ հանքի հիմնական ուղղակի՝ հանքամասի կառավարումը չէր կենտրոնացված նրա վարիչի ձեռքում, այլ բաժանված էր մի քանի ֆունկցիոնալ բաժինների միջև։ Այսպիսով ստացվել էր վոչ թե հանքի կառավարում, այլ «կառավարման դիմաղրկություն և պատասխանատվության դիմաղրկություն»։

Նոր սիստեմը վերջ է դնում այս անհուսալի խառնաշփոթությանը և խայտառակ պարալելիզմին։ Նոր սիստեմը, հին, սնանկացած կարգից տարբեր, կառուցված է ղեկավարության համակենտրոնացման սկզբունքի վրա։ Հանքային ստորերկրյա աշխատանքների հիմքում, ինչպես ածուխի հանույթի, այնպես էլ նրա փոխադրման գծով, դրվում է հանքամասը որպես ինքնուրույն տերիտորիալ - արտադրական միավոր, իսկ հանքամասի պետին լիակատար իշխանություն է տրվում նրան յենթակա հանքամասի բոլոր աշխատանքների նկատմամբ։ Իզուր չէ, որ Դոնբասում հանքի, հանքահորի և տրեստի կառավարման կազմակերպման մասին Ժողկոմխորհի և ԿԿ-ի յերեկ հրապարակված վորոշման մեջ սպառիչ ամբողջականությամբ վորոշված են հանքամասի պետի ու նրա ամենամերձավոր ոգնականների՝ տասնապետի և բրիգադիրի իրավունքներն ու պարտականությունները։

Հանքի կառավարման հին կարգն իր ֆունկցիոնալ բաժինների սիստեմով՝ հող էր ստեղծում լեռնային աշխատանքների և մեքենայացման աշխատանքների ամենանվասակար հակամեխանիզատորական հակադրման համար։ Ռեակցիոն հակամեխանիզատորական տրադիցիաների կրողները համառորեն պաշտպանում էին ինժեների և լեռնային տեխնիկի կոչումն՝ իբրև ինչ-վոր բարձր բան՝ մեխանիզատորների հետ խառնելու ամեն մի փորձից։ Դա արհեստական և խորապես հետադիմական հակադրում էր։ Մեր որերում, յերբ մեքենայացումը դարձել է ածխահանման վճռական գործոնը, մեքենայացումն արհամարհող յուրաքանչյուր ինժեներ և յուրաքանչյուր տեխնիկ անխուսափելիորեն կխրվի։ Լեռնային գործի համար իսկական լայն հեռանկարներ է տալիս միմիայն մեքենայացումը, որը սոցիալիստական ածխարդյունաբերությունը ձեռնափոր հանքահորերի նեղ խոռոչներից դուրս է բերում մեքենայացված լավայի արձակ ասպարեզը։ Ածխարդյունաբերության նոր պայմանները պահանջում են, ուրեմն, վոչ միայն կառավարման նոր սիստեմ, այլև նրա աշխատողների նոր տիպ, ամենից առաջ ինժեներների և տեխնիկների նոր տիպ։ Ժողկոմխորհի և ԿԿ-ի վորոշումը ածխարդյունաբերության նոր կազմակերպչական կառուցվածքի մասին հենց նախատեսում է այն, որ մեր ածխարդյունաբերական կադրերը դաստիարակվեն նոր խնդիրների վրդով։

Հանքի ղեկավարման հին սիստեմն իր խճողված կա-

ռավարչական ապարատով և անհամար վարիչներով՝ հնարավորություն չեր տալիս կազմակերպելու արտադրության օպերատիվ ղեկավարությունը։ Ապարատը պատի պես կանգնած եր արտադրության և հանքաղեկավարման միջև։ «Այդպիսի դրության,— ասում է ընկ. Լ. Մ. Կագանովիչը հարվածայինների դոնբասյան կոնֆերենցիայում,— հանքի վարիչը ժամանակ չեր ունենում արտադրությամբ զբաղվելու։ Նա, խեղճը, հազիվ եր հասցնում եր ապարատը կառավարել»։ Այնպես եր ստացվում, որ վարիչը թղթեր եր գրում, իսկ հանքի ղեկավարման բոլոր պարտականությունները կատարում եյին յերկրորդական, շատ հաճախ վոչ-կոմպետենտ մարդիկ։ Նոր սիստեմը նախատեսում է, որ հանքի ղեկավարները առանց վորևե մեկի վստահելու՝ իրենց սեփական ձեռքը վերցնեն ղեկավարման թելերը և զուր ժամանակ չվատնեն գրասենյակային քաշքշուկի վրա։

Ժողկոմխորհի և ԿԿ-ի յերեկ հրապարակված մյուս վորոշումը — Դոնբասի ածխարդյունաբերության բանվորների և ինժեներ-տեխնիկական ուժերի աշխատավարձի մասին—այդ բնագավառում յեղած մեծ խեղաթյուրումները վերացնելու և աշխատավարձն իրոք աշխատանքի արտադրողականության բարձրացման լծակը դարձնելու նպատակն է հետապնդում։ Այդ խեղաթյուրումներն ածխարդյունաբերության ղեկավարման հին, գրասենյակային-բյուրոկրատական մեթոդների ուղեկիցն են հանդիսանում։ Հանքերում աշխատանքի վարձատրման ամենից ավելի խոշոր խեղաթյուրումներից մեկն այն է, որ նորմաների ու գնահատումների մեծագույն խայտաբղետություն գոյություն ունի և ահագին բարդ հաշվարկներ են կատարվում աշխատավարձը վորոշելիս։ Միևնույն ժամանակ հանքի վարիչը, գլխավոր ինժեները և հանքամասի պետը փաստորեն մեկուսացված են արտադրանքի նորմաներ ու գնահատումներ սահմանելուց։ Մեծ քանակությամբ հրատարակվող տարիֆ-տեղեկատուները լոկ խճճում են գործը, ճգնելով վաղորոք նախատեսել և պարագրաֆի շրջանակների մեջ սեղմել կենդանի իրականության վիթխարի բազմազանությունը։ Այդպիսի դրության պայմաններում ածխարդյունաբերության մեջ մտցված գործավարձը ձևական բնույթ

ե կրել և խթան չի հանդիսացել աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Ժողկոմխորհի և ԿԿ-ի վորոշումը պահանջում է վերջ դնել այդ անթույլատրելի խեղաթյուրումներին։ Հանքի ղեկավարներն իրավունք են ստանում կոնկրետ նորմաներ ու գնահատումներ սահմանել տեղական պայմաններին համապատասխան, ղեկավարվելով լոկ տիպային նորմաներով և գնահատումներով։ Այս վորոշումը վիթխարի նշանակություն ունի։ Նա հանքի ղեկավարների ձեռքը բացառիկ ուժ ունեցող միջոց է տալիս, վորին նրանք պետք է կարողանան ուղղություն տալ ի շահ ձեռնարկության, ի շահ աշխատանքի արտադրողականության բարձրացման։ Պարզ է, որ այդ պայմաններում նորմավորման և աշխատանքի կազմակերպման գործը, աշխատավարձի կանոնավորման գործը չի կարելի վստահել յերկրորդական մարդկանց, ինչպես այդ յեղել է մինչև այժմ։ Այդ գործին պետք է այժմ ձեռնարկեն իրենք ղեկավարները։ Նրանք պետք է իրենց ձեռքը վերցնեն աշխատանքի արտադրողականության բարձրացման վճռական լծակը։

Աշխատավարձի կանոնավորման վճռական բարելավումը պարտադիր նախադրյալ է հանդիսանում ճիշտ իրացնելու համար Ժողկոմխորհի և ԿԿ-ի վորոշումը ածխարդյունաբերության բանվորների աշխատավարձը բարձրացնելու մասին։ Հիմնական բարձրացումն ընթանում է նորմայի դերակատարման համար պրոգրեսիվ վերադիրն ուժեղացնելու և մեխանիզմների վրա որինակելի աշխատանք կատարելու համար պարգևատրելու գծով։

Անհրաժեշտ է բանվորներին լայնորեն բացատրել նոր պրոգրեսիվ գործավարձը և պարգևատրման նոր սիստեմը։ Ընդ վորում առանձին հոգածությամբ պետք է բացատրել այն վորոշումը, վորի համաձայն պրոգրեսիվ գործավարձը հաշվարկվում է վոչ թե որվա, ինչպես մինչև այժմ եր, այլ ամսվա գործարքային աշխատանքի արդյունքների հիման վրա։ Պրոգրեսիվ գործավարձի ամենորյա հաշվեգրումն ամենտեսակ պակող ու անբարեխիղճ աշխատողներն ոգտագործում եյին պետությանը խաբելու համար, նա հանգում եր բացասական արդյունքների։ Ամսվա աշխատանքի արդյունք-

ների հիման վրա պրոգրեսիվ գործավարձ հաշվեգրելը միակ ճիշտ յեղանակն է, վորն ազնիվ ու բարեխիղճ բանվորների համար բարձր վարձատրություն է ապահովում և արժատից կտրում է պոկողների ու ծուլերի մեքենայությունները։

Ղեկավարման նոր սիստեմի ամրացման համար կարևորագույն նշանակություն ունի այն վորոշումը, վորի համաձայն ավելացվում է անմիջապես հանքերում և հատկապես ստորերկրյա աշխատանքներում զբաղված ինժեներների ու տեխնիկների աշխատավարձը։

Կուսակցությունը Դոնբասի վերակառուցման ուղղությամբ ծավալած իր աշխատանքում հենվում է հանքափոր պրոլետարիատի լայն մասսաների անձնուրաց աջակցության վրա։

Դոնբասի հարվածային հանքափորների կոնֆերենցիան, վորը տեղի ունեցավ ապրիլ ամսին Ստալինո քաղաքում, ցուցադրումն եր այն անձնուրաց աջակցության, վորը ցույց է տալիս լեռնագործների լայն մասսան Ժողկոմխորհի և կուսակցության ԿԿ-ի վորոշմանն ածխարդյունաբերության մասին։ Այդ աջակցությունն եր հնչում հանքերի խորքից կոնֆերենցիայի ամբիոնը բարձրացած հռետորների ճառերում։ Այդ աջակցությունն արտահայտություն ունեցավ կոնֆերենցիայի հրապարակած դիմումի ջերմ խոսքերի մեջ։ Վերջապես, կուսակցության միջոցառումներին աջակցելն իր ամենացայտուն արտահայտությունն է գտնում Դոնբասի հարյուրավոր և հազարավոր առաջամարտիկների, ածուխի հերոսների հարվածային, որինակելի աշխատանքի մեջ։

Կուսակցությունն սպասում է և պահանջում, վոր Դոնբասի բայլշևիկներն անցնեն յեռ յեկող մրցման գլուխը, վոր նրանք ածուխի համար պայքարի հանեն լեռնագործների նորանոր մասսաներ, վոր երենց շարքերը մաքրեն աղբից ու կեղտից, վոր ազնվորեն և մինչև վերջը կատարեն կուսակցության ցուցումները Դոնբասի վերակառուցման մասին և Դոնբասը հանեն սոցիալիստական արդյունաբերության առաջավոր շարքերը։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎՈՃԸ

Լենինգրադը — մեքենաշինության, նավաշինության, առաջին տրակտորների, ուժեղ ավտոմոբիլների, տուրբինների, ելեկտրոտեխնիկական սարքավորման, ճշգրիտ պրիբորների այդ քաղաքը—խորհրդային պետության տնտեսական հասունության պատմական վկայությունն է։ Լենինգրադի արդյունաբերությունը վոչ միայն սոցիալիստական հեղափոխությունը զինում է նոր տեխնիկայով, այլև գտնվում է նրա յուրացման, վորակական ցուցանիշների կատարման համար մղվող պայքարի ավանգարդում։ Լենինգրադի արդյունաբերությունը 1933 թ. առաջին յեռամսյակում կատարեց գործարանային ինքնարժեքի իջեցման պլանը։ Աշխատանքի արտադրողականությունը 1933 թվի հունվար-ապրիլ ամիսներում 1932 թվի համեմատությամբ ավելացավ 13,2 տոկոսով, պլանով նախատեսված տարեկան 10 տոկոսի դիմաց։

Լենինգրադը տնտեսական մեծ նախաձեռնության քաղաքն է։ Ցեվ պատահական չէ, վոր Լենինգրադում ծնվեց և առաջին անգամ լինելով իրագործվում է տեխարդֆին-պլանը։

Ինչումն է տեխարդֆինպլանի եությունը։ Արդֆինպլանը, ինչպես գրում են Լենինգրադի գործարանների դիրեկտորներն ընկ. Ստալինին, տեխնիկան և եկոնոմիկան շաղկապում է մեկ ամբողջի մեջ արտադրության պլանները կազմելիս։ Ըստ եության դա սոցիալիստական ձեռնարկության աշխատանքի և ղեկավարման միակ ճիշտ մեթոդն է։

Շատ հաճախ ինչպես են կազմվում պլանները մեր ձեռնարկություններում։ Պլան կազմողները բազմաթիվ անհայտներ են գործադրում։ Նրանք հաճախ կոնկրետ չգիտեն, թե ինչպիսի կարողություն ունի ամբողջ սարքավորումը, չեն պատկերացնում, թե ինչքան և ինչպիսի ոպերացիաներ են պահանջվում այս կամ այն մեքենան, մեքենամասը, իրը և այլն արտադրելու համար, վերջապես, չգիտեն բանվորական ուժի վորակն ու պլանավորումը։ Այդ բոլոր անհայտներից պլանավիկները բարդ վիճակագրական մանիպուլացիաների ճանապարհով հանում են ինչ-վոր մի-

ջիններ, վորոնք հաճախ վոչ մի առնչություն չունեն ձեռնարկության փաստական վիճակի հետ։ Մթթե կարելի յե ղեկավարել այդպիսի պլանի հիման վրա։

Տեխարդֆինպլանը հիմնվում է ամենից առաջ այն բանի վրա, վոր մանրամասնորեն ճանաչեն ձեռնարկությունը, գիտենան, թե նա ինչ պետք է արտադրի։ Լենինգրադի «Սվետլանա» գործարանում, որինակ, 1932 թվին 1933 թվի տեխարդֆինպլանը մշակելիս ի նորո տեխնիկական հաշվարկի յենթարկեցին ցեխերի, սարքավորման կարողությունը, առհասարակ բոլոր այն արտադրական հնարավորությունները, վորոնք բղխում են ձեռնարկությունում ուժերի ըստ ամենայնի ռացիոնալ դասավորումից։ Ցեվ վոչ միայն այդ։ Ամենափոքրիկ մանրամասնություններով մշակվեց արտադրանքի բոլոր տեսակների տեխնոլոգիական պրոցեսը (առանձին ոպերացիաները, նրանց տևողությունը)։ Այդտեղից՝ այն առաջատար նշանակությունը, վոր ստացավ «Սվետլանա» գործարանի լաբորատորիան, «Սվետլանա», վորը մեկն է այն առաջին գործարաններից, վորտեղ ծնվեց և իրագործվում է տեխարդֆինպլանը։ Գործարանային լաբորատորիայում արտադրանքի բոլոր հատկությունները և արտադրության բոլոր պրոցեսներն ուշիուշով մտածված են։ Այնտեղ ծնունդ են առնում արտադրության ամենից ավելի նպատակահարմար և եժան նստող մեթոդները։ Տեխարդֆինպլանն անիմաստ է առանց ձեռնարկության գիտական ուղեղի, առանց գործարանային լաբորատորիայի, վորը և՛ նախատեսում է, և՛ ստուգման յենթարկում։

Տեխարդֆինպլանը, ինչպես ցույց է տալիս Լենինգրադի ձեռնարկությունների փորձը, կազմվում է բանվորների և մասնագետների մասսայական ակտիվ մասնակցությամբ։ Ցեվ այդ բնական է, վորովհետև պլանավորման հին մեթոդները գործադրելու դեպքում հաճախ դազդյահին հասնում է վերացական մի թվանշան, վորը բյուրոկրատիզմի և գործը չգիտենալու կենսակցության պտուղ է հանդիսանում։ Տեխարդֆինպլանը շոշափում է յուրաքանչյուր բանվորի, յուրաքանչյուր բրիգադի, վարպետի, ինժեների, վորովհետև խոսքը նրա դազդյահի, ցեխի կարողության մասին է, խոսքը ավելորդ ոպերացիաները կրճատելու և ճնացածները պարզացնելու մասին է, խոսքը տեխնիկական նորմաների մասին է, խոսքը սարքավորման և արտադրանքի հատկությունների, վիճակի մասին է, խոսքն իրական ռացիոնալացման մասին է, խոսքը վոչ թե մեռած, վերացական կատեգորիաների, այլ ձեռնարկության կենդանի մկանի պլանավորման մասին է։

Այստեղից՝ տեխարդֆինպլանի պոպուլյար լինելը։ Աչք ակալերն ընկնում են։ Յուրաքանչյուր բանվորի և ինժեների՝ նրանց իսկ մասնակցությամբ՝ պարզ է դառնում, թե ինչ, ինչպես, և ինչքանի պետք է արտադրել, ինչ պետք է սովորել։ Տրված է աշխատանքի հեռանկարը։ Գործարանի դիրեկտոր ընկ. Կասվոյնը գրում է, վոր «Սվետլանայի» տեխարդֆինպլանն այնպես է մշակված, վոր ակնառու պատկերացում է տալիս յուրաքանչյուր ցեխի, յուրաքանչյուր բրիգադի, թե ինչպիսի մեթոդներով, ինչ ժամկետով և ինչպես պետք է աշխատել՝ իր արտադրական պարտավորությունները կատարելու համար։

Տեխարդֆինպլանի իդեայում առանձին վոչինչ չկա։ Հենց դրանումն է նրա արժանիքը։ Ի՛նչ անսովոր բան կա գործարանում մաքրություն, հաստատուն կարգ ու կանոն, հստակ կազմակերպություն սահմանելու և պահպանելու մեջ։ Դրանում վոչ մի անսովոր բան չկա։ Նորը մեր առաջավոր ձեռնարկություններում, վորոնք հասկացել են կուսակցության լոզունգը նոր տեխնիկան յուրացնելու մասին, հենց նրանումն է, վոր նրանք գործնականորեն, իրականում իրագործում են կուլտուրական կառավարման և արտադրության կազմակերպման տարրական բաները։

Հենց դրանումն է այժմ աշխատանքի վոճը։

Լենինգրադի «Սեվկաբել» գործարանում մտցված են համեմատական քարտեր, վորտեղ զուգադրվում են տվյալ մեքենամասի արտադրության նորմաներն ու մեթոդները մեկ կողմից՝ գործարանում, իսկ մյուս կողմից՝ Ամերիկայի առաջավոր ձեռնարկություններում։ Քարտին տեխնիկական հրահանգ է կցված տվյալ մեքենամասն արտադրող բրիգադների համար, թե ինչպես պետք է հասնել ամերիկյան նորմաների կատարմանը, ինչպես պետք է իրագործել «հասնել

61097-67

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук С.С.С.Р.

և անցնել» լոզունգը։ Սրանում ինչ առանձին բան կա։ Վոչինչ։ Բայց սա իր պարզությամբ և եֆեկտավորությամբ հիանալի մտածված բան է։ Այդ քարտերը վկայում են այն մասին, որ այս ձեռնարկությունում նատած են ստեղծարար գիտելիքների տեր, գլուխ ունեցող մարդիկ, մարդիկ, որոնց համար կուսակցության լոզունգներն ու որոշումները գործողության իրական ծրագիր են հանդիսանում։ Նույնպիսի աղբյուրներից, նույնպիսի մարդկանց միջոցով ել ստեղծված է տեխարդֆինպլանը, որն անկասկած բացառիկ դեր կխաղա նոր տեխնիկան յուրացնելու, որակական ցուցանիշների համար պայքարելու գործում։

Կասկած չկա, որ տեխարդֆինպլանը վիթխարի նշանակություն ունի ոչ միայն մեկ ձեռնարկության սահմաններում պլանավորում անցկացնելու համար։ Գործարանների պրակտիկայում արմատանալու համեմատ տեխարդֆինպլանը կանցնի նրանց շեմքերից։

Տեխարդֆինպլանը Լենինգրադի գործարանների մեծ հասունության վկայությունն է։ Նրանք գտել են այն կարևորագույն ողակը, թե ինչպես է մի շաղկապել տեխնիկան և եկոնոմիկան, որակի բարձրացումը և ինքնարժեքի իջեցումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և սոցիալիստական մրցման վարարումը։ Այն գործնական արդյունքները, որոնց արդեն հասել են այդ գործարանները—լավագույն հանձնարարականն են տեխարդֆինպլանի համար։

Լենինգրադի կուսամարզկոմի նիստում (այդ մասին այսոր հաղորդվում է «Պրավդա»-յում), որտեղ քննվել է տեխարդֆինպլանի հարցը, ընկ. Կիրովն իր ելույթի մեջ տեխարդֆինպլանը բնութագրեց իբրև «սոցիալիզմի իսկական մի կատար»։

Այդպես ել է։ Տեխարդֆինպլանում դրված է սոցիալիստական արտադրության մեծ սկզբունքը։ Բուրժուական ձեռնարկատերն իր ձեռնարկությունում նույնպես պլանավորում է ճիշտ տեխնիկական հաշվարկների հիման վրա։ Կապիտալիստը նույնպես ճգնում է եկոնոմիկան շաղկապել տեխնիկայի հետ։ Բայց կապիտալիստական եկոնոմիկան շուռ է տալիս գործարանների տեխնիկական հաշվարկները։ Լավագույն ինժեներների ամենահանճարեղ հաշվարկումները չեն կարող շարժման մեջ դնել համաշխարհային կապիտալիստական ճգնաժամի միջոցով շղթայված կապիտալիստական ձեռնարկությունների չգործող սարքավորումը։ Տեխնիկայի, որի նորագույն նվաճումները թելադրում են առավելագույն չափով ավելացնել արտադրությունը, և կապիտալիստական եկոնոմիկայի միջև, որը չի կարողանում իրացնել ապրանքների վիթխարի պաշարները, անտագոնիզմ գոյություն ունի, որը կարող է լուծվել, մեջտեղից հանվել միմիայն պրոլետարական հեղափոխությամբ։

Տեխարդֆինպլանի մեջ գործնական արտահայտություն է գտնում մեր տնտեսության սոցիալիստական մեծ սկզբունքը՝ անտագոնիզմի բացակայությունը արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև։ Տեխնիկայի և եկոնոմիկայի շաղկապումը պլանավորման մեջ՝ տալիս է արտադրության աճում, բավմացնում է նյութական հարստությունները աշխատավորության համար։ Դրանումն է տեխարդֆինպլանի՝ իբրև սոցիալիստական ձեռնարկության մեջ կատարվող պլանավորման մեթոդի՝ սկզբունքային նշանակությունը։

Ավտոտրակտորային արդյունաբերության աշխատանքը, տեխարդֆինպլանի հաջողությունները, նոր տեխնիկայի յուրացման առաջամարտիկների հզոր շարժումը, որը ծավալվում է ավելի ու ավելի մեծ ուժով և թափով, վկայում են այն մասին, թե յերկրի լավագույն մարդիկ ինչպիսի նվիրվածությամբ և խանդավառությամբ պայքարում են առաջին հնգամյակում ստեղծված մեծ արտադրողական ուժերի յուրացման համար։

Նոր տեխնիկայի համար մարանչողների շրջանակն ընդարձակվում է։ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան միացյալ պլենումի լոզունգները հետզհետե ավելի ու ավելի լայն ճանապարհ են հարթում դեպի միլիոնների գիտակցությունը։

Տեխարդֆինպլանի փորձի ուսումնասիրությունը և գործադրությունը նոր տեխնիկայի յուրացման համար պայքարելու այդպիսի ուղիներից մեկն է հանդիսանում։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿՏՈՐԸ

(Ընկ. Կիրովի ելույթը)

Վերջերս Համ. Կ(բ)Կ Լենինգրադի Կոմիտեյի նիստում քննարկվեց «Սվետլանա» գործարանի տեխարդֆինպլանը կազմելու և գործադրելու փորձը։

Պլանավորման զրասենյակային-բյուրոկրատական մեթոդների դեմ պայքարելու գործում տեխարդֆինպլանի ունեցած նշանակության, տեխարդֆինպլանի էության և գործնական եֆեկտավորության մասին մանրամասն զեկուցում տվեց «Սվետլանա»-յի դիրեկտոր ընկ. Կասվոյնը։ Զեկուցման մեջ ընկ. Կասվոյնը նշեց, որ «Սվետլանա»-յի բրիգադային, ցեխային և համագործարանային տեխարդֆինպլանները կազմելու գործում մասնակցել են հազարավոր բանվորներ և մասնագետներ։

Տեխնիկապես մտածված պլան կազմելու վրա ողջ գործարանային կոլեկտիվի գործադրած մեծ, մանրազնին ստեղծարար աշխատանքի հետևանքով սվետլանցիներին հաջողվեց յերևան հանել աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման և արտադրանքի վրակի յավացման նոր ուղիներ։

«Սվետլանայի» 1933 թվի առաջին չորս ամսվա աշխատանքի արդյունքները յավաղույն ապացույց են հանդիսանում տեխարդֆինպլանի գործունեությանը վորակական և քանակական ցուցանիշների համար մղվող պայքարում։ Սվետլանցիները 4 ամսվա պլանը կատարեցին 111 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացրին 12 տոկոսով, իսկ բանվորների թիվը գործարանում կազմել է ընդամենը պլանի 99 տոկոսը։ Ամբողջապես կատարեցին ինքնարժեքի առաջադրությունը՝ առաջին յեռամսյակում ինքնարժեքն իջեցնելով 4,75 տոկոսով։

Ցնտեսման ընդհանուր գումարը, վոր սվետլանցիները հույս ունեն ստանալ այս տարի տեխարդֆինպլանով նախատեսված միջոցառումների իրացումից, անցնում է 3 միլիոն ռուբլուց։

Ընկ. Կասվոյնի զեկուցումը լրացրեց իր ելույթում «Սվետլանայի» գործարանային կուսկոմի քարտուղար ընկ. Կարպովան։ Նա պատմեց «Սվետլանայի» կոմունիստների առաջատար դերի մասին արդֆինպլանը կազմելու և կատարելու գործում, նշեց նրա մեծ նշանակությունը արտադրության ղեկավարությունը կոնկրետացնելու գործում։

Համ. Կ(բ)Կ Վիբորգյան ռայոնի կոմիտեյի քարտուղար ընկ. Պ. Սմորոդինը նշեց այն մեծ աշխատանքը, վոր կատարել են սվետլանցիները գործարանային կուս-կազմակերպության ղեկավարությամբ տեխարդֆինպլանի մշակման և արմատացման ուղղությամբ։ Տեխարդֆինպլանի համար մղված հետևողական բայշևիկյան պայքարը «Սվետլանայի» համար ապահովեց առաջին տեղը ռայոնում, նրան տիպար դարձրեց, վորին հավասարվում են Վիբորգյան ռայոնի մնացած ձեռնարկությունները։

Տեխարդֆինպլանի նշանակությանը և «Սվետլանայի» նվաճումներին նվիրված ելույթում Համ. Կ(բ)Կ Լենինգրադի կոմիտեյի քարտուղար ընկ. Կիրովն ընդգծեց այդ նոր գործի սկզբունքային մեծ նշանակությունը և նշեց «Սվետլանայի» փորձը մեր արդյունաբերության մյուս ձեռնարկություններին փոխանցելու անհրաժեշտությունը։

«Տեխարդֆինպլանը հենց այն է, ինչ մեզ հարկավոր է այժմ ձեռնարկությունների ղեկավարությունը բարելավելու և մեր ունեցած բոլոր ռեզերվները լիովին ոգտագործելու համար։ Դա հենց աշխատանքի խիկական սոցիալիստական կազմակերպման տիպարն է, դա սոցիալիզմի խիկական կտորն է։ Տեխարդֆինպլանն ունի վոչ միայն մեծ գործնական, այլև վիթխարի սկզբունքային նշանակություն ֆիզիկական և մտավոր աշխատանքի խզումը վերացնելու տեսակետից, վորովհետև բանվորն ակտիվ մասնակցություն ունենալով արտադրության պլանավորման մեջ, իրոք բարձրանում է իր դաղդյայի, ցեխի և ամբողջ գործարանի ստեղծարար կառավարման մակարդակին։

«Մենք հաճախ ձեռնարկությունների ղեկավարներին հայհոյում ենք նրանց վատ աշխատանքի համար,— ասաց ընկ. Կիրովը,— բայց քիչ չեն այնպիսի ձեռնարկություններ, վորը պետք է նշել նրանց ունեցած հաջողությունների համար, վորոնց փորձը պետք է լայնորեն մասսայականացնել, ուսումնասիրել, փոխանցել մյուս ձեռնարկություններ-

ին։ Լենինգրադում կա յերկու գործարան՝ «Սվետլանա» և «Սեվկաբել», վորոնք անկասկած ավելի լավ են կազմակերպված, քան մյուսները։ Մենք ինչ գնովել ուզում ենք պետք է տեխարդֆինպլանն արմատացնենք արդյունաբերության մեջ, բայց այդ պետք է անել վոչ թե մի գլուխ շրջաբերականներով կարգադրություններ անելով, այլ մի գործարանի կենդանի, գործնական փորձն անմիջապես մյուսին փոխանցելով»։

Համ. Կ(բ)Կ Լենինգրադի կոմիտեյի բյուրոն ընկ. Ուգարովի գլխավորությամբ մի հանձնաժողով ստեղծեց «Սվետլանա»-յի փորձը Լենինգրադի արդյունաբերության մյուս ձեռնարկություններում ծավալելու ուղղությամբ գործնական միջոցառումներ մշակելու համար։

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՆԱՄԱԿՆ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻՆ

ԹԱՆԴԱԳԻՆ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆ

ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում դուք ասացիք՝

«Առաջին հնգամյակի շրջանում մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարության խանդավառությունն ու պաթոսը և վճռական հաջողություններ ձեռք բերինք։ Այդ շատ լավ է։ Բայց այժմ այդ բավական չէ։ Այժմ մենք այդ գործը պետք է լրացնենք նոր գործարանների և նոր տեխնիկայի յուրացման խանդավառությամբ ու պաթոսով, աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճատումով։ Դրանումն է այժմ գլխավորը»։

Մեր փորձը, վորը մենք կուտակել ենք նոր արտադրությունների կազմակերպման համար մղվող պայքարում, ցույց է տալիս, վոր նոր տեխնիկայի յուրացման և մեր ամբողջ աշխատանքի վորակի բարելավման կարևորագույն ուղիներից մեկն է հանդիսանում սոցիալիստական պլանավորման ամենակատարելագործված ձևը՝ տեխարդֆինպլանը։

Ձեռնարկությունների մեծ մասի տեխարդֆինպլանների գլխավոր թերությունն այն է, վոր նրանք կազմվում են անցած ամիսների և տարիների հաշվետվությունների ու վիճակագրության հիման վրա։ Այդ տվյալների մեջ ուղղումներ են մտցվում նոր սարքավորման, լրացուցիչ տարածությունների, նորմաների վերանայման և այլ խնդիրների վերաբերյալ, բայց և այնպես այդ մեծ մասամբ հաշվի է առնվում մեխանիկորեն։

Տեխարդֆինպլանը կառուցվում է տեխնիկական ատամուր պատվանդանի վրա։ Այդ տեխնիկական պատվանդանն ուսումնասիրվում է յուրաքանչյուր ցեխում և յուրաքանչյուր բրիգադում։ Այն, ինչ չի կարող հաշվի առնել գործարանային վարչության կամ միավորման պլանավիկը, հիմնվելով միմիայն վիճակագրության վրա, հաշվի չեն առնում բանվորը, վարպետը, ինժեները, բրիգադը, ցեխը, վորոնք անմիջական շփում ունեն սարքավորման հետ։ Խոտանը և խոտանի պատճառները, սարքավորման կոնկրետ թերությունները, նրա ոգտագործումը, տեխնոլոգիական պրոցեսի բարելավման հնարավորությունը,—այս բոլորը մեծ մասամբ ակնառու կերպով տեսնում են բանվորը, ցեխային ինժեները և այլն, բայց նրանք արտահայտություն չեն գտնում վիճակագրության մեջ և դուրս են մնում պլանավիկի տեսողության դաշտից։

Առաջ պլանը հրամցվում եր ցեխին, և նա հարմարվում եր նրան։ Հսկայական ռեզերվներ եյին կորչում։ Այժմ ցեխը տեխնիկական ճիշտ պատվանդանի վրա յեռնում պլանը, կոնկրետ հաշվառման յենթարկելով պահանջված բանուժը, նյութերը, սարքավորումները, խոտանի նվազեցման և տեխնոլոգիական պրոցեսի լավացման, գործիքների ռացիոնալ ոգտագործման և այլ ռացիոնալիզատորական առաջարկների իրագործման որացուցային ժամկետները։

Տեխարդֆինպլանի վիթխարի նշանակությունը նրանումն է նաև, վոր նա պահանջում է գործարանային վարչության կոնկրետ ոպերատիվ ղեկավարումն ապահովող հստակ կառուցվածք սահմանել, անպայման սարքավորումն ամրացնել բանվորներին, տեխնիկական անձնակազմը՝ բրիգադներին և հերթափոխություններին, բանվորների խիստ բաժանում կատարել ըստ նրանց վորակավորման, հետևաբար՝ վերացնել դիմազրկությունն ու հավասարեցումը։

Տեխարդֆինպլանը եկոնոմիկան և տեխնիկան շաղկապում է մեկ ամբողջի մեջ։ Գործարանի քանակական և վորակական առաջադրությունների կատարումը տեխարդֆինպլանն ապահովում է գիտականորեն մշակված տեխնոլոգիական պրոցեսով, ինչպես նաև մի ամբողջ շարք միանգամայն կոնկրետ տնտեսական, կազմակերպչական և սոցիալ-կենցաղային միջոցառումներով։

Տեխարդֆինպլանի իդեան ծնունդ առավ Լենինգրադի Վիբորգյան ռայոնի գործարաններում, սոցիալիստական արդյունաբերության առաջին համամիութենական կոնֆերենցիայում արտասանած ձեր պատմական ճառից քիչ հետո։ Դուք այն ժամանակ մեզ կոչ եյիք անում տիրապետել արտադրության տեխնիկային, վորպեսզի մենք ինքներս մասնագետներ դառնայինք։ Մենք համառորեն պայքարում ենք արտադրության նոր, տեխնիկապես ամենից ավելի կատարելագործված մեթոդները յուրացնելու համար։ Բնականաբար մենք ամենից ավելի սուր կերպով զգում ենք արտադրության պլանավորման հին մեթոդների անհամապատասխանությունը աշխատանքի նոր պայմաններում։

Լենինգրադի գործարաններում ծնունդ առավ տեխարդֆինպլանի իդեան, մշակվեցին նրա բովանդակությունն ու գործադրման մեթոդները։ «Սվետլանա», «Սեվկաբել», «Ռուսկի դիզել» գործարանների և «Կարմիր Պուտիլովեցի» տրակտորային գործարանամասի նախաձեռնությանն ընդառաջեց Համկ(բ)կ Լենինգրադի կոմիտեն։ Առաջավոր գործարանների փորձը Լենինգրադի կոմիտեյի վորոշումից հետո անցյալ տարվա փետրվար ամսին փոխանցվեց արդյունաբերության այլ բաղմաթիվ ձեռնարկությունները։

Տեխարդֆինպլանի մշակումը մեծ դպրոց է արտադրության յուրաքանչյուր ղեկավարի համար։ Տեխարդֆինպլանի մշակման պրոցեսում մենք ավելի լավ, ավելի կոնկրետ կերպով ճանաչում ենք ձեռնարկությունների տեխնիկան և եկոնոմիկան, բաց ենք անում մեր աշխատանքի թերությունները, նշում ենք նրանց վերացման ուղիները։ Դեռ շատ թերություններ ու բացեր կան արդյունաբերության

աշխատանքում։ Մեր գործարաններից շատերը դեռ վատ են կատարում իրենց առաջադրությունները, առաջին հերթին հետ են մնում վորակական ցուցանիշների գծով։ Կասկած չկա, վոր հետամնացության հիմնական պատճառն են հանդիսանում տնտեսական և տեխնիկական ղեկավարության տակավին չվերացված գրասենյակային-բյուրոկրատական մեթոդները։ Տեխարդֆինպլանն իր սուր ծայրով ուղղված է ամենից առաջ ձեռնարկությունների ղեկավարման հենց այդպիսի մեթոդների դեմ, վորոնք դատապարտվել են կուսակցության կողմից։ Նա հենց այն զենքն է, վորը մեզ կոդնի ամբողջապես կատարելու մեր արտադրական պարտավորությունները կուսակցության և յերկրի հանդեպ, մեզ կոդնի լուծելու ձեր առաջադրած խնդիրը, այն է՝ յուրացնելու նոր գործարանները և նոր տեխնիկան։

Տեխարդֆինպլանը կազմելուն մասնակցում են գործարանների բոլոր բանվորները, բոլոր մասնագետները։ Բանվորական լայն մասսաների ներգրավումը տեխարդֆինպլան կազմելու գործին և ճիշտ տեխնիկական-տնտեսական հաշվարկների համաձայն կատարվող աշխատանքն ընդարձակում են բանվորների և մասնագետների տեխնիկական հորիզոնը։ Ձեռնարկություններում տեխարդֆինպլանը կյանքի կոչեց մասսայական տեխնիկական կրթության մի ամբողջ սեստեմ։ Տեխարդֆինպլանն այսպիսով բարձրացնում է բանվորների, ինժեներների, տեխնիկների և վողջ տնտեսական ապարատի վորակավորումը, հեշտացնում է նոր տեխնիկայի լիակատար ոգտագործման համար անհրաժեշտ ունակություններ ձեռք բերելու գործը։

ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում արտասանած ձեր ճառում դուք նշեցիք այն յերեք հիմնական ուժերը, վորոնք վորոշեցին մեր համաշխարհային պատմական հաղթանակները — աշխատավորական միլիոնավոր մասսաների ստեղծարար ակտիվությունն ու անձնազոհությունը, բայլշևիկյան կուսակցության հաստատուն ղեկավարությունը, տնտեսության խորհրդային սիստեմի արժանիքներն ու առավելությունները։

Լենինգրադի գործարաններն առաջինը բարձրացրին և լայնորեն ծավալեցին լենինյան սոցիալիստական մրցման

դրոշը։ Լենինգրադի գործարաններում առաջինը ծնունդ առավ հանդիպական պլանավորման իդեան և առաջացան առաջին տնտեսավարական բրիգադները։ Իրենց բայլևիկյան կազմակերպության կողմից ղեկավարվող լենինգրադյան բանվորների ակտիվությունը և նախաձեռնությունը ապահովեցին հնգամյակի կատարումը Լենինգրադում 3 տարում։ Հնգամյակի տարիներում Լենինգրադի արդյունաբերությունը ստեղծեց 200-ից ավելի նոր արտադրություններ, տիրապետեց ամենաբարդ մեքենաների և գործիքների՝ բլյումինգների, տուրբինների, գեներատորների, նավերի, բազմատեսակ էլեկտրական ապարատների և սարքավորումների պատրաստման տեխնիկային։ Չերկրորդ հնգամյակը մեզ ավելի բարդ պահանջներ է առաջադրել։ Լենինգրադի բանվորները յերկրորդ հնգամյակի շեմքը կոխեցին նոր նախաձեռնությամբ. ստեղծեցին տեխարդֆինպլանը, որն իր մեջ զուգորդում է աշխատանքի սոցիալիստական ձևերի բոլոր հիմնական տարրերը՝ սոցմրցումը, հանդիպական պլանավորումը, բրիգադային տնտեսավարկը։ Այդ բոլոր գործադրվող միջոցառումները տեխարդֆինպլանը դնում են տեխնիկական ամուր պատվանդանի վրա։

1933 թվի առաջին յեռամսյակի փորձը ցույց տվեց, որ մյուսներից ավելի լավ են աշխատել հենց այն ձեռնարկությունները, որոնք զինված են տեխարդֆինպլանով, որոնք հետևողականորեն, բայլևիկորեն տնտեսական ղեկավարության պրակտիկայի մեջ արմատացնում են սոցիալիստական պլանավորման նոր կուլտուրան։ «Սվետլանա», «Կարմիր Պուտիլովեց», Մարտիի անվան և իրենց քանակական ու որակական ցուցանիշների պլանները կատարած մյուս ձեռնարկությունների որինակը դալիս է հաստատելու Լենինի քաղաքի հարվածայինների հեղափոխական խանդավառության վրա բազմապատկված մեր տեխարդֆինպլանների գործունությունը։ «Սվետլանա» գործարանը, որինակի համար, առաջին յեռամսյակի արտադրական ծրագիրը կատարելով 111,3 տոկոսով, ինքնարժեքն իջեցրեց 4,8 տոկոսով, որը ճշտիվ համապատասխանում է ստացած առաջադրությանը։ «Կարմիր Պուտիլովեց» գործարանն առաջին յեռամսյակի ծրագիրը կատարեց 101,6 տոկոսով, իսկ ինքնարժեքը պլանի 3 տոկոսի դիմաց իջեցրեց 4 տոկոսով։

Տեխարդֆինպլանը մշակող և գործադրող Լենինգրադի փորձը պետք է փոխանցել վողջ սոցիալիստական արդյունաբերությանը։

Պետք է մեր գործարանների ու ֆաբրիկաների ուշադրությունը հրավիրել սոցիալիստական պլանավորման նոր ձևերի վրա, վորովհետև տեխարդֆինպլանը, ընկ. Ստալին, կարևորագույն լծակն է ձեր առաջադրած խնդրի՝ նոր գործարանների և նոր տեխնիկայի յուրացման խնդրի լուծման համար։

«Կարմիր Պուտիլովեց» գործարան — Ոտ.
«Սվետլանա» գործարան — Կասվոյն.
«Ելեկտրոսիլա» գործարան — Իվանով.
Ստալինի անվան գործարան - ԲՏՈՒՀ — Լենկին.
«Սեվկաբել» գործարան — Լիտվինով.
Մարտիի անվան գործարան — Սուշունով.
Լենինի անվան գործարան — Ավդեյեվ.

ՄԵՐ ՊՈՂՊԱՏԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՄԵՆԱԼԱՎԸ ՅԵՎ ԱՄԵՆԱԵԺԱՆԸ

(«ՄՈՒՐՃ-ՄԱՆԳԱՂ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՆԱՁԵՎԸ)

«Մուրճ-Մանգաղ» գործարանի ինքնարժեքի վերաբերյալ առաջին կոնֆերանսը, որը հրավիրված է գործարանային կուսակցական կոմիտեյի կողմից կուսակցության կենտրոնական որգան «Պրավդայի» նախաձեռնությամբ, լսելով և քննարկելով գործարանի դիրեկտոր ընկ. Ստեպանովի և գլխավոր հաշվապահ ընկ. Գուբինի զեկուցումները ինքնարժեքի պլանի 1933 թվի 4 ամիսների կատարման մասին, տեխնիկական դիրեկտոր ընկ. Ռոձեվիչի զեկուցումը գիտահետազոտական բաժնի աշխատանքի և դերի մասին, բրիգադիրներ ընկ. ընկ. Զեսանոկովի, Կազակովի և Սեմինի զեկուցումները նրանց

տնտեսավարական բրիգադների աշխատանքի մասին, գլխավոր մեխանիկ ընկ. Շապիրոյի զեկուցումը վերանորոգման վարակի և ինքնարժեքի վրա նրա ունեցած ազդեցության մասին, վորոշում է.

1. Զեկուցումների թեզիսները հաստատել։

2. Նկատի ունենալով 1933 թվին նոր արտադրությունները յուրացնելու անհրաժեշտությունը, նկատի ունենալով տեխնոլոգիական պրոցեսի փոփոխությունը, պլանով գործարանի համար նախագծված է ինքնարժեքը բարձրացնել 1,5 տոկոսով։ Կոնֆերանսի նախապատրաստությունը, բուն կոնֆերանսը, բանվորների առաջարկները յերևան հանեցին վիթխարի, չոգտագործված ռեզերվներ, վորոնց մասին առաջ գործարանում չգիտեին զեկավարները և բանվորները։ Այդ ռեզերվները հնարավորություն են տալիս յուրացնել նոր արտադրությունը և իջեցնել արտադրանքի ինքնարժեքը անցյալ տարվա համեմատությամբ։ Այդ պատճառով կոնֆերանսը անհրաժեշտ է համարում վերանայել գործարանին տրված ինքնարժեքի առաջադրությունը, հրաժարվել պետական դոտացիայից, վորը կապված է ինքնարժեքի բարձրացման հետ, և աշխատել ինքնարժեքն անցյալ տարվա համեմատությամբ իջեցնել 1 տոկոսով։

3. Գործարանային լաբորատորիաները ձեռնարկությանուղեղն են։ «Մուրճ-Մանգաղի» հետազոտական բաժինը չի կատարել իր խնդիրները, յերեսը չի դարձրել դեպի եկոնոմիկան։ Գործարանի գիտահետազոտական բաժնի և ինժեներ-տեխնիկական աշխատողների մասնակցությունն ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարում տակավին անբավարար է։ Կոնֆերանսը պահանջում է, վոր գիտահետազոտական բաժինը յերեսը դարձնի դեպի ցեխ և դեպի ինքնարժեք։ Կոնֆերանսը լիովին հավատացած է, վոր բոլոր ինժեներ-տեխնիկական աշխատողները բոլոր ջանքերը գործ կդնեն կոնֆերանսի վորոշումները կատարելու համար։

4. Ժամանակին ու բարձր վորակով կատարվող կապիտալ և պլանային-կանխիկ վերանորոգումը գործարանի անխափան աշխատանքի և ինքնարժեքի իջեցման կարևորագույն պայմանն է։ Կոնֆերանսը նշում է, վոր գլխավոր մեխանիկի բաժինը մինչև այժմ չի ապահովել ռպերատիվ լավորակ վերանորոգումը և նրա ցածր արժեքը։ Կոնֆերանսը գտնում է, վոր իր վորոշումների հիման վրա գործարանի վարչությունը պետք է արմատական վերակառուցի վերանորոգումների կազմակերպումը և կրճատի գլխավոր մեխանիկի բաժնի ուռճացած հաստիքը։

5. Լավագույն հարվածայինների, նոր տեխնիկայի Իզոտոպների փորձի լայն տարածումն ինքնարժեքի իջեցման լծակն է։ Կոնֆերանսը հավանություն է տալիս Զեսնոկովի, Կազակովի ու Սեմինի տնտեսավարական բրիգադների աշխատանքին և գտնում է, վոր նրանց փորձը պետք է որինակ ծառայի բրիգադներում տնտեսավարկ կազմակերպելու համար, որինակ ծառայի գործարանի բոլոր ցեխերում ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարում։

6. Կոնֆերանսն ի գիտություն է ընդունում գործարանի դիրեկտոր ընկ. Ստեպանովի այն հայտարարությունը, թե՝ ինչպես առանց նարյադի, այնպես էլ առանց բյուջեյի չի կարելի աշխատել, և առաջարկում է գործարանային վարչությանը կենսագործել այդ սկզբունքը—ցեխերին և բրիգադներին ժամանակին տալ վոչ միայն նարյադները, այլև նախահաշիվները, ֆոնդերը և լիմիտները։

7. Լավորակ սկզբնական դոկումենտը գործարանային հաշվառման հիմքն է։ Կոնֆերանսը գտնում է, վոր հաշվառման ներկա սիստեմը գործարանում խճողված է, բյուրոկրատական, խանգարում է արտադրությանը և թանգացնում է արտադրանքի ինքնարժեքը։ Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում մոտիկ ժամանակում գործարանում մտցնել միասնական սկզբնական դոկումենտ։

8. Կոնֆերանսը գործարանի վարչա-կառավարչական հաստիքը,—վորը կազմում է բանվորների թվի 20 տոկոսը,—գտնում է խճողված, ուռցրած, վորպիսին խանգարում է աշխատանքին, ստեղծում է ավելորդ գրագրություն ու քաշքշուք, հանգում է ղեկավարության գրասենյակային-բյուրոկրատական մեթոդների։ Կոնֆերանսը հնարավոր է

համարում վարչա-կառավարչական հաստիքը կրճատել մինչև 10 տոկոս։

Գործարանի անցյալ տարվա և 1933 թվի չորս ամսվա աշխատանքի, կոնֆերանսի աշխատանքի արդյունքները վկայում են ինքնարժեքի իջեցման տակավին չոգտագործված վիթխարի աղբյուրների մասին։ Գործերով, մեր ռեալ առաջարկներով և արդեն ձեռք բերված ինքնարժեքի իջեցումով մենք տապալում ենք Դոլնիկովների կապիտուլյանտական, ոպորտունիստական տեսակետը բացթողման գների բարձրացման մասին։ Ինքնարժեքի թանգացումը արտադրության քայքայման, ժողովրդական տնտեսության կազմալուծման ճանապարհն է։ Խզումը ինքնարժեքի և բացթողման գների միջև շատ ձեռնարկություններում պետք է վերացնել վոչ թե գների բարձրացման, այլ ինքնարժեքի իջեցման միջոցով։ Մեր գործարանը և շատ ուրիշ գործարաններ ցույց տվին, վոր այդ հնարավոր է։ Հարկավոր է միայն բայլշևիկյան պայքար պլանի համար, նրա վորակական ցուցանիշների կատարման համար։

Կոնֆերանսը դիմում է «Մուրճ-Մանգաղի» բոլոր բանվորներին, բանվորուհիներին, մասնագետներին և ծառայողներին հետևյալ ջերմ կոչով.

— Մոբիլիզացիայի յենթարկեցեք ձեր բոլոր դիտելիքները, փորձը, ունակությունները և աշխատեցեք բարելավել արտադրության կազմակերպումը, աշխատանքի վորակը և ինքնարժեքի իջեցումը։

«Մուրճ-Մանգաղի» պրոլետարները միշտ յեղել են կուսակցության Կենտրոնական Կոմիտեի վորոշումների համար մարտնչողների առաջին շարքերում։ Նրանք առաջին հնգամյակում բանվորների խանդավառությունը կազմակերպեցին գործարանի վերակառուցման և բարձրորակ պողպատների արտադրության յուրացման համար։ Նրանք հերոսական և անձնուրաց նվիրվածությամբ պայքարում են կուսակցության գլխավոր գծի համար՝ ընդդեմ ոպորտունիստների։

Ցեվ այժմ, յերբ ընկ. Ստալինի ցուցումներով ժողովրդատնտեսական պլանի կատարման գործում գլխավորն են հանդիսանում նրա վորակական ցուցանիշները և նոր տեխնիկայի յուրացումը, մենք, «Մուրճ-մանգաղցիներս» պետք է նույնպես լինենք առաջին շարքերում։

Մենք ձեզ կոչ ենք անում գործնական աշխատանքի, կոնֆերանսի վորոշումների սիստեմատիկ և ամենորյա կատարման։ Մեր կոնֆերանսի վորոշումներով մենք մեզ վրա պարտականություններ ենք վերցնում ամբողջ Խորհրդային Միության առաջ։ Ցեվ այդ պարտականությունները մենք պատվով կկատարենք։

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում կես տարուց յերկրորդ գործարանային կոնֆերանս հրավիրել ինքնարժեքի շուրջը՝ առաջնի վորոշումների կատարումն ստուգելու և 1934 թվի տեխարդիֆինպլանը մշակելու համար։

Դեպի գործնական աշխատանք, հանուն ինքնարժեքի իջեցման։ Մեր պողպատը պետք է լինի ամենալավը և ամենաեժանը։ Դրանով մենք կկատարենք մեր պարտականությունները պրոլետարական հեղափոխության առաջ, յերկրի առաջ, Դրանով մենք կամրացնենք Խորհրդային Միության պաշտպանունակությունը։

Կեցցե լենինյան ԿԿ-ը և ամբողջ աշխարհի միլիոնավոր պրոլետարների ու աշխատավորների առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ մեր Ստալինը։

Կեցցե Մոսկվայի բայլշևիկյան կոմիտեն և Մոսկվայի բայլշևիկների ղեկավար, ընկ. Ստալինի լավագույն զինակից Լազար Մոյսեյևիչ Կագանովիչը։

Առաջ դեպի բայլշևիկյան նոր հաղթանակներ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0182540

СА 754
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Սրբագրիչ Ա. Տ.-Սիրեյան
Հանձնված է արտադրության 2 հուլիսի 1933 թ
Ստորագրված է տպագրելու 3 հուլիսի 1933 թ.
Հրատ. № 120. Տիրաժ 500. Գլավլիթ 7764 (բ)

Գուլսիրատի տպարան. Պատվեր № 8. 65,000 տպ. նշ.